

«Պարոն Գրիգորյան, կարո՞ղ եմք ֆիքսել, որ ԱՄՆ-ի պետքարտուղարի այցով որոշակի փոփոխություններ արձանագրվեցին Միացյալ Նահանգների արևելամիդլայսթան և հարավկովկասյան քաղաքականության մեջ»:

Հիլարի Բլինթոնի այցով Նահանգները փորձում էր լուծել շատ կարևոր մեկ հարց: Բանն այն է, որ Չեր նշած տարածաշրջաններում ամերիկյան ազդեցությունը վերջին շրջանում բավականին բուլանցել էր, և ամերիկացիները այժմ, որ Միացյալ Նահանգները մնում է շահագրգիռ կողմ, լուրջ խաղաղապետական ռեֆորմներում և անտարբեր չէ այնտեղ տեղի ունեցող բոլոր կարգի գործընթացների նկատմամբ:

Իսկ ինչո՞ւ էր նվազել Նահանգների, որպես ռեյտինգային երկրի, ազդեցության գործոնը՝ երբեմնի «գունավոր», և ոչ միայն «գունավոր» երկրներում:

Շատ պարզ պատճառով. 2008 թ. ամռանը տեղի ունեցած ռուս-վրացական պատերազմի ժամանակ Միացյալ Նահանգները չկարողացավ էֆեկտիվ աջակցել Վրաստանին, այդ իսկ պատճառով, ինչպես ընդունված է ասել, գրեթե կորցրեց տարածաշրջանը: Ենթադրելի է, քաղաքական, հումանիտար աջակցություն ԱՄՆ-ը ցուցաբերեց, սակայն ռազմական՝ անկարող էր: Երկրորդ պատճառն էլ, թերևս, վերջին շրջանում թուրքիայի վարած քաղաքականությունն է: Գիտենք՝ թուրքիան Կովկասում և Մերձավոր Արևելքում ամերիկյան հուսալի հենարանն է համարվել մշտապես: Բայց քանի որ թուրքիայի արտաքին քաղաքականությունը կտրուկ փոփոխվեց վերջին հինգ-վեց տարիներից, ԱՄՆ-թուրքիա հարաբերությունները բավականին բարդացան, բարդացան նաև Իսրայել-թուրքիա հարաբերությունները, այդ իսկ պատճառով ամերիկյան ազդեցությունը բուլանցավ նաև ողջ տարածաշրջանում, ու Բլինթոնի այցը փորձ էր՝ շտկելու իրավիճակը:

Հասա՞վ Նահանգներն իր նպատակին: Չեմ կարծում, որ բոլոր հարցերը կարողացավ լուծել: Այցն ինչ-որ չափով տարածաշրջանային գործընթացների վրա իր ազդեցությունը կունենա, սակայն որոշիչ լինել չի կարող: Այն-հայտ օրինակը նույն ժամանակահատվածում է: Ղարաբաղի հարցում ևս մեկ անգամ ակնհայտ դարձավ, որ կողմերը պատրաստ չեն խնդրի լուծմանը:

Իսկ որևէ սպասում ունե՞ք հուլիսի 16-ին Ալմաթիում կայանալիք ԱԳ Միասարարների հնգակողմ հանդիպումից:

Ոչ մի: Չնայած համարում եմ՝ ավելի լավ է բանակցել, քան պատերազմել: Իսկ սպասելիքներ չունեն այն առումով, որ վերջնական որևէ լուծում հնարավոր չէ այս պահին գտնել:

Ի դեպ, առաջիկայում եԱԲԿ ՄԻ համաձայնագրերը կնքվեն, իրենց խոսքերով, «օկուպացված» տարածքներ: Դա ինչ է՝ բանակցային գործընթացում նկատվող նոր տա՞րր, թե՞ ժամանակ ձգելու «պոլիտոլիա»:

Գիտե՞ք, ի վերջո, Միսսիսի խումբն էլ ունի իր ֆունկցիաները: Այս փուլում եԱԲԿ ՄԻ-ն ունի առաջադրանք՝ ակտիվացնել գործընթացը և կողմերին հուշել կամ դրդել վերջնական լուծման: Ոչ ոք չի բացառվում, որ այցելությունը գրավյալ տարածքներ նպատակ է հետապնդում կողմերին ցույց տալու, որ հակամարտությունը երկար չի կարող մնալ սառեցված, և պետք է դարաբարտյան հարցը շուտափույթ լուծել:

Կհաջողո՞ւն համաձայնագրերն իրենց «առաջելությունում»:

Չեմ կարծում: Գոնե ես նման հնարավորություն չեմ տեսնում թշնամական այս ահավոր մթնոլորտի պայմաններում: Այն, ինչ այսօր կատար-

վում է Հայաստանի և Ադրբեջանի միջև (նկատի ունեն գինադարարի խախտման հաճախացած դեպքերը, Չայլուի դիվերսիան), ինչպես նաև Բաքվից անվերջ հնչող ռազմատենչ հայտարարությունները լավատեսություն չեն ներշնչում:

Պարոն Գրիգորյան, վերջերս բավականին հետաքրքիր միտում է նկատվում հատկապես արևելյան փորձագետների կողմից, որոնք պնդում են, որ ամռանը կլինեն ռազմական գործողություններ, կոմբակոմի Ստեփանակերտը և դուրսև շարունակ: Ինչո՞ւ հանկարծ նման «մտայնություն» առաջացավ, և հետո՞ որքանով է հնարավոր բլիցկոլիգ դարաբարտյան «ֆրոնտում»:

Նման ռիտորիկայի պատճառները շատ են. նախ՝ Ադրբեջանը չի երկնչում ցուցադրել իր անհամբերությունը. վերջինս ցանկանում է արագ

ֆիքսված է երեք համաձայնագրի երկրների նախագահների հայտարարության մեջ (նկատի ունեն Կանադայում ընդունված վերջին տեքստը), մեզ համար բավականին հաջող տարրեր են պարունակում, նորմալ մոտեցումներ են արձանագրում, որոնց մենք կարող ենք նաև դրական արձագանքել:

Դուք այն եզակի փորձագետներից եք, որ «դրանք» հաջողված եք համարում: Մյուսները կամ անկեղծ չեն, կամ խսկապես կարծում են, որ «մեծ վնաս» կա այդ սկզբունքներում հայաստանյան կողմի համար, և տագնապ են հնչեցնում, որ Հայաստանը կօգտագործվի որպես «մանրադրամ»: Ի՞նչն է, ըստ Ձեզ, «հաջող» հայկական կողմի համար:

Այն հաջող է, որովհետև հստակ ֆիքսված է Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակը, հստակ ֆիքսված է, որ Հայաստան-Ղարաբաղ կապը պետք է անխափան լինի, ասել է՝ Լաչինի խնդիրը ևս ներառված է, հստակ ֆիքսված է, որ ինչ-որ ժամանակ հետո պետք է ժողովրդի կողմից կա-



«**Ի**րառես de facto»-ի գրուցակիցն է Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի ղեկավար, քաղաքագետ ՍՏԵՓԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

# «Մեդվեդևի այցից մեծ փոփոխություններ պետք չէ սպասել»

լուծել խնդիրը, որովհետև համարում է, որ ժամանակի ձգձգումը նվազեցնում է տարածքները հետ վերադարձնելու հնարավորությունները, ինչն էլ նրան մղում է նյարդայնության, ինչպես ինչ կարող է լինել: Ասել է՝ կա հավանականություն ռազմական գործողություններ վերսկսելու: Եվ այնուհանդերձ, այդ հավանականությունը մեծ չէ, որովհետև բոլոր կողմերը, առաջին հերթին Հայաստանն ու Ադրբեջանը, հասկանում են, որ պատերազմի դեպքում կորուստները լուրջ են լինելու, ու պարզ չէ, թե պահից ով է օգտվելու: Մյուս կողմից էլ, այդ հայտարարությունները, ինչպես նաև փորձագիտական կարծիքները, ճնշման ուրույն ձև են՝ խնդիրը լուծման տանելու համար: Սակայն ես չեմ կարծում, որ դրանով ինչ-որ մեկը կարող է մեզ վախեցնել, որովհետև մենք մեր շահերն ունենք: Փոխազդում, այո, պետք է, սակայն ինչի՞ դիմաց: Ի՞նչն ինչից հետո կլինի. չէ՞ որ ամեն բան իր գինն ունի, և մենք մեր քայլերը պետք է կատարենք ոչ թե ինչ-որ մեկի ճնշման, այլ լուրջ հաշվարկի արդյունքում: Օրինակ, ես կարծում եմ, որ «մադրիդյան սկզբունքներ» ասվածն ու օրացույցը, որը

մարտահայտության հանրաքվե անցկացվի: Ի դեպ, պարոն Գրիգորյան, օրերս Ալիևը ծավալում «րեչ օզլախլը» այդ հայտարարության առնչությամբ, ուր ակնհայտ երևում էր, որ նա բացառակ դեմ չէ Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակին, ինչի առնչությամբ շատ փորձագետներ պնդում էին՝ երբեք հնարավոր չէ, որ Ալիևը համաձայնի Ղարաբաղի միջանկյալ ստատուսին նույնիսկ: Ալիևն անվերջ առաջնորդվում է «և նախն, և մեխին» սկզբունքով, անում է կոշտ և մեղմ հայտարարություններ՝ ելնելով պահից և կոնյունկտուրային սպասարկումներից: Իմ կարծիքով՝ հենց միայն այն պատճառով, որ Ալիևը համաձայնություն է տվել այդ հայտարարությանը, մենք ևս պետք է համաձայնենք ու դրանով իսկ ստուգենք՝ որքանով է ադրբեջանական կողմը, ի վերջո, անկեղծ: Իսկ ո՞վ առաջինը «ոչ» կասի այդ փաստաթղթին, ըստ Ձեզ: Հուսով եմ՝ այնքան խելամիտ կլինենք, որ այդ առաջինը մենք չենք լինի: Իսկ Դմիտրի Մեդվեդևի Հայաստան կատա-

րելիք առաջիկա այցից որևէ սպասելիք ունե՞ք: Մեդվեդևի այցից մեծ փոփոխություններ ևս պետք չէ սպասել, քանզի Ռուսաստանը հակված չէ Ղարաբաղյան խնդրի արագ կարգավորման: Հունիսի վեցին Ստամբուլում Պուտինի արած հայտարարությունը դրա վառ ապացույցն է. այնտեղ նա ասաց՝ բարդ կոնֆլիկտ է, լուծումը ժամանակ է պահանջում:

Արդյո՞ք այդ «թայմաուտը» պայմանավորված չէր նրանով, որ Ռուսաստանն ու պարոն Պուտինն այդպես էլ չկարողացան «վերցնել» ադրբեջանական գազն ամբողջությամբ և եվրոպական գներով, այլ կերպ ասած՝ ունենալ «Հարավային հուսք» ընդդեմ «Նաբուկոյի»:

Պատճառը, այո, կարող էր և դա լինել, բացի դրանից, գլխավոր պատճառ էլ կա, այն է՝ Ռուսաստանը չի հասկանում՝ եթե ինքը փորձի Ղարաբաղի հարցը լուծել, ի՞նչ է իրեն սպասում տարածաշրջանում, և արդյոք ինքը կկարողանա՞ տեղակայել այնտեղ իր խաղաղապահ ուժերը: Եթե համոզված լինի, որ կարող է, ապա ինքը ևս կնպաստի խնդրի արագ հանգուցալուծմանը:

Նախագահական նստավայրի բակում՝ ՀՀ ԱԳ Միասարարի հետ համատեղ ասուլիսի ժամանակ, Հիլարի Բլինթոնն ուղիղ երկու անգամ հարկ համարեց (երկրորդ անգամ արդեն խփստ ընդգծված) շեշտել, որ Ղարաբաղյան հարցում եԱԲԿ ՄԻ-ում ԱՄՆ-ն ու Ռուսաստանը հանդես են գալիս համաձայնեցված, ի տարբերություն օսական և արխագական խնդիրների, ինչը շատ փորձագետների մեջ (անկեղծ ասած՝ նաև նվաստիս) կասկած առաջացրեց. հնարավոր է՝ ինչ-ինչ պայմանավորվածություններ արդեն իսկ կան Օրաձայի և Մեդվեդևի միջև, և ընդհանրապես, նրանք կարո՞ղ են խաղաղապահների առնչությամբ համաձայնության գալ:

Մի մոռացեք, որ խաղաղապահների հարցում անչափ կարևոր է նաև Իրանի դերակատարությունը, ինչը երբեք ու երբեք չի կարելի անտեսել: Ես չեմ կասկած իսկ չունեմ, որ Ռուսաստանը կտրականապես դեմ է, որ ՆԱՏՕ-ի զորքերը հայտնվեն այս տարածաշրջանում, ինչն էլ նշանակում է՝ խաղաղապահների հարցում նրանք երբեք համաձայնության գալ չեն կարող: Բայց որ ԱՄՆ-ի և Ռուսաստանի միջև այսօր Ղարաբաղի հարցում առկա է կոնսենսուս, նույնպես աներկբա է. այն է՝ ծանր հարց է, արագ լուծել հնարավոր չէ, պետք է լուրջ քանքեր գործադրել:

Երբե՞ք հնարավոր չէ խաղաղապահների հարցով համաձայնության գալ. ասենք, այլ տեղի «վրայով» առևտուր անեն, այստեղի «վրա» բարիչեն:

Ոչ, հնարավոր չէ, որովհետև Ռուսաստանը թույլ չի տա, որ իր ազդեցության գոտում հայտնվեն ամերիկյան կամ ՆԱՏՕ-ական զորամիավորումներ:

Իսկ «խառը» տիպի զորքե՞ր: Կոնֆլիկտանա՞ստ: Ընդ որում, այդ հարցում շատ մեծ է թե Ադրբեջանի, թե Հայաստանի դերակատարությունը:

Ով ի՞նչ է ուզում:

Ադրբեջանը, ակնհայտ է, չի ուզում ռուսական խաղաղապահներ լինեն գրավյալ տարածքներում: Հայաստանի դեպքում դժվարանում են ասել: Մինչև հիմա պաշտոնական մակարդակով չգիտենք՝ ինչն ուզում հայաստանյան իշխանությունները. ոչինչ մինչև հիմա չի ասվել: Եվ այնուհանդերձ, կարծում եմ, որ մեզ ձեռնտու չէ որևէ երկրի զորամիավորման առկայությունն այս տարածքում: Ղարաբաղի սահմանների ամենալավ պահապանը հայկական զորամիավորումներն են:

Զրույցը՝ Կարմեն ԴԱՎԹՅԱՆԻ